Խնկի ծառ

Մեր դռանը խնկի ծառ, գյուլում ջան,
Ձեր դռանը խընկի ծառ, գյուլում ջան,
Խնկենին ա բերել բար, գյուլում ջան,
Իմ խորոտիկ, պզտիկ յար, գյուլում ջան:

Մեր դռանը խնկի ծառ, գյուլում ջան,
Նախշուն բլբուլ վրեն թառ, գյուլում ջան,
Երթար ու գար, շորոր տար, գյուլում ջան,
Սիրուն յարին օրոր տար գյուլում ջան:

Մեր դռանը խնկի ծառ, գյուլում ջան,
Մարջան բլբուլ վրեն թառ, գյուլում ջան,
Գնար ու գար, շվին տար, գյուլում ջան,
Անուշ յարի թևին տար գյուլում ջան:

Մեր դռանը խնկի ծառ, գյուլում ջան,
Ոսկի բլբուլ վրեն թառ, գյուլում ջան,
Կարմիր խնձոր հաներ, տար, գյուլում ջան,
Ալվան ծաղիկ տանել տար գյուլում ջան: